ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«18» 11 2024 թ.
№ ՊԵՆ-ԳԳՀ-1685

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 00481595
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ. 92տ
հեռ. +37460388838

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 29.05.2023թ. կնքված N ՀՄԱԱՇՁԲ-23-10/7-1 գնման պայմանագրի, պայմանագրին կից 18.03.2024թ. կնքված N 1 Համաձայնագրի և 19.06.2024թ. կնքված N 1 Փոփոխության (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը պետք է կատարի 1,831,062,495 (մեկ միլիարդ ութ հարյուր երեսունմեկ միլիոն վաթսուներկու հազար չորս հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն սույն թվականի նոյեմբերի 14-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 1,300,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի աշխատանքներ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 1,300,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի չափով չկատարված և 175,748,500 (հարյուր յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով դեռևս չնախատեսված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 10,034,055 (տասը միլիոն երեսունչորս հազար հիսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 300,676,742 (երեք հարյուր միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 390,000,000

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

(երեք հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. նոյեմբերի 28-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. նոյոմբերի 28-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ